# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2025թ. թիվ 589-Ա

### ԼՈՒՍԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 49-րդ կետով, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Հ.Թումանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ.Միքայելյանի 08.10.2025թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխատանաքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված պարտականությունների խախտման համար «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Հ.Թումանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Լ.Միքայելյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Մ. Նահապետյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ էլեկտրոնային փոստի և ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով, ինչպես նաև պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 10
ք.Վանաձոր